

Սարիբեկյան Ա. – Բուհը չի կարող կախված լինել ուսանողի վարձավճարից –
թերթ, «Կրթություն», Ե., 22.02.2017

ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանն այցելել է Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիա: Ռեկտոր Արամ Իսաբեկյանի ուղեկցությամբ նախարարը ծանթացել է բուհում իրականացված նորոգման աշխատանքներին, շրջել է նոր ցուցասրահում, որտեղ նախատեսվում են ցուցադրել շրջանավարտների դիպլոմային աշխատանքները: Այնուհետեւ ԿԳ նախարարն աշխատանքային քննարկում է անցկացրել պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որին ներկա են եղել Գյումրու եւ Դիլիջանի մասնաճյուղերի տնօրենները, ինչպես նաեւ կերպարվեստի եւ դեկորատիվ-կիրառական արվեստի ֆակուլտետների ղեկանները, տարբեր ստորաբաժանումների ղեկավարները, բուհի պրոռեկտորները:

ԿԳ նախարարը, դիմելով ներկաներին՝ նշել է, որ բուհի իրավական կարգավիճակի փոփոխության հարցը՝ ՊՈԱԿ-ից վերակազմավորվել հիմնադրամի, ներկայացված է ՀՀ կառավարության հաստատմանը: «Համաձայն «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նոր նախագծի՝ բոլոր բուհերը պետք է ունենան հիմնադրամի կարգավիճակ, որպեսզի կարողանան զարգացում ապահովել: Մենք ակնկալում ենք, որ նոր կարգավիճակը կնպաստի, որ Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիան առավել հետեւողական եւ արդյունավետ իրականացնի իր հիմնական առաքելությունը եւ կարողանա նոր տեմպ տալ զարգացմանը», - նշել է նախարարը՝ հավելելով, որ կարգավիճակի փոփոխությունը առավել ճկուն հնարավորություններ է ստեղծում արվեստի բուհերի ցանց եւ միասնական կլաստեր ստեղծելու տեսանկյունից:

Նախարարի խոսքով՝ առաջնային խնդիրներից մեկը բուհի միջազգայնացումն ու ուսանողների շարժունության խրախուսումն է. «Մենք Հայաստանում այսօր ունենք մի պատկեր, երբ դեպի դուրս՝ օտարերկրյա բուհերի հետ շարժունությունն ավելի արդյունավետ է իրականացվում, քան ներսում՝ մեր բուհերի միջեւ: Ես կարծում եմ, որ մենք պետք է այստեղ որոշակի չափանիշներ սահմանենք, որպեսզի շարժունությունը դառնա պարտադիր նորմ. օրինակ, եթե ուսանողը բուհում պետք է ստանա պայմանական 10 կրեդիտ, ապա նա պետք է 3 կրեդիտն այլ բուհից բերի՝ իր ցանկությամբ: Սա շատ կարեւոր բարեփոխում է, որին մենք անհրաժեշտաբար պետք է գնանք, քանի որ այդպես է ողջ աշխարհում՝ եւ ամերիկյան, եւ զարգացած եվրոպական բուհերում: Շատ կարեւոր է, որ բուհերը գիտակցեն, թե ինչ կտա շարժունության հնարավորությունը կոնկրետ իրենց:

Օրինակ, եթե Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիան թողարկում է արվեստի բարձրակարգ մասնագետների, ապա այդ նույն մասնագետները պետք է իրավունք ունենան որոշակի կրեդիտներ ստանալ նաեւ մանկավարժական համալսարանում, որպեսզի ստանան նաեւ մանկավարժի որակավորում, այսինքն՝

ունենան դասավանդման իրավունք»,- իր խոսքում նշել է ԿԳ նախարարը՝ ավելացնելով, որ այստեղ խնդիր կարող է առաջանալ մասնագիտությունների նկարագրման եւ կրեդիտների արժեքի հաշվարկման հարցում: Լեւոն Մկրտչյանի խոսքով՝ «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքը մշակվել է նշված հարաբերությունները կարգավորելու սկզբունքով:

Ռեկտոր Արամ Իսաբեկյանը, անդրադառնալով միջազգայնացման գործընթացին, տեղեկացրել է, որ Երեւանի գեղարվեստի ակադեմիան ներգրավված է «Տեմպուս» եւ «Էրազմուս+» միջազգային ծրագրերում: Ռեկտորը որպէս մտահոգություն նաեւ նշել է, որ բուհական համակարգում մասնագիտությունների եւ որակավորումների որոշակի խառնաշփոթ է առաջացել, որը բերել է առանձին մասնագիտացումների խաթարման. «Մենք հույս ունենք, որ նախարարությունը, որպէս կրթության քաղաքականությունը իրականացնող լիազոր մարմին, առավել հետեւողական կլինի այս հարցում, որպէսզի, մասնավորապէս արվեստի բուհերը, տվյալ ոլորտում նեղ մասնագիտական պրոֆիլ ունենան եւ այս առումով մրցակցությունն էլ լինի առողջ»,- իր խոսքում նշել է Արամ Իսաբեկյանը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաեւ բուհերի ֆինանսավորման խնդրին: Նախարարի խոսքով՝ այսօրվա պատկերը մտահոգիչ է. «Երբ մենք նայում ենք բուհերի բյուջեների կառուցվածքին, տեսնում ենք, որ մոտ 20 տոկոսը պետության ֆինանսավորումն է, մնացածն ուսանողներից գանձված վարձավճարներն են: Այս մոտեցումը չի կարող հեռանկարային լինել, որովհետեւ բուհը ուղիղ գծով կախված է ուսանողի վճարած ուսման վարձից: Սա շատ վտանգավոր միտում է նաեւ կրթության որակի տեսանկյունից, որովհետեւ նման իրավիճակում բուհը ոչ մի դեպքում չի ուզում հրաժարվել վատ սովորող ուսանողից»,- նշել է ԿԳ նախարարը:

Մինչդեռ, ինչպէս նախարարն է նշել, աշխարհի առաջատար բուհերում, որտեղ պետության ամբողջական ֆինանսավորում չկա, բուհական բյուջեներում ուսանողների վարձավճարները 30 տոկոսից չեն անցնում: «Եթէ այդ հարաբերակցությունը խախտվում է եւ ուսանողների վարձավճարների տեսակարար կշիռը գերազանցում է բյուջեի 30 տոկոսը, ապա տվյալ համալսարանի ղեկավարությունը սկսում է անհանգստանալ: Մեր բուհերը եւս պետք է լրջորեն մտածեն այս ուղղությամբ, այլապէս մենք որեւէ զարգացում չենք ունենա, առավել եւս, որ առաջիկա մեկ-երկու տարիներին դիմորդների աճ չի կանխատեսվում»,- նշել է ԿԳ նախարարը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաեւ Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի մասնաճյուղերի գործունեության արդյունավետությանը:

Անդրանիկ Սարիբեկյան